**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ МАРЗПЕТАРАН А Р М А В И Р А

0901 Ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱԲՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

<< ------ >>-------------------------- 2016թ. թիվ______
Ձեր << -------- >>------------------------- թ. թիվ--------

0901. Г. АРМАВИР
УЛ. АБОВЯН - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

<<Հետաքննող լրագրողներ>>
ՀԿ-ի<<Հետք>> թերթի լրագրող պարոն Գ. Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 09.01.2017թ թիվ 9D3B-2DF-53BB գրության տեղեկացվում է, որ 2016թվականին ՀՀ Արմավիրի մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման նպատակով.

1.ՀՀ կառավարության 09.06.2016թ թիվ 587-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից

ա)ՀՀ Արմավիրի մարզի թվով 5 համայնքների համար 12 հակակարկտային կայաններ ձեռք բերելու համար հատկացվել է 36000000(երեսունվեց միլիոն) ՀՀ դրամ գումար:Մրցույթում հաղթող ճանաչված <<Բարվա>>ՍՊԸ-ն իրականացրել է հակակարկտային կայանների մատակարարումը:

բ) Փարաքար համայնքի հիմն. դպրոցի շենքի տանիքի վերանորոգման համար հատկացվել է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումար,որից նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար 90000(իննսուն հազար)

ՀՀ դրամ գումար,որից մրցույթի արդյունքում <<US ԱՐՏ>> ՍՊԸ-ի հետ կնքվել է 67500(վաթսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի պայմանագիր, իսկ վերանորոգման աշխատանքների համար 2910000(երկու միլիոն ինը հարյուր տասը հազար) ՀՀ դրամ գումար, որից մրցույթի արդյունքում <<Լուսագանձ>> ՍՊԸ-ի հետ կնքվել է 1697146(մեկ միլիոն վեց հարյուր իննսունյոթ հազար մեկ հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ գումարի վերանորոգման աշխատանքների կատարման պայմանագիր,Ա/Ձ Ղուկաս Սարգսյանի հետ կնքվել է 55000(հիսունհինգ հազար)ՀՀ դրամ գումարի տեխնիկական հսկողության պայմանագիր, <<US ԱՐՏ>> ՍՊԸ-ի հետ կնքվել է 20000(քսան հազար) ՀՀ դրամ գումարի հեղինակային հսկողության պայմանագիր:

գ)Տանձուտ համայնքի մանկապարտեզի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար հատկացվել է 1500000(մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար,որից մրցույթի արդյունքում Ա/Ձ Սերյոժա Մկրտչյան-ի հետ կնքվել է 1120900(մեկ միլիոն մեկ հարյուր քսան հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարի պայմանագիր:

դ)Դողսի համայնքի միջն. դպրոցի շենքի տանիքի ընթացիկ վերանորոգման համար հատկացվել է 500000(հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

ե)Արտաշարի համայնքին հատկացվել է 10000000(տասը միլիոն) ՀՀ դրամ գումար МТЗ-82 մակնիշի գյուղատնտեսական տրակտոր ձեռքբերելու համար:

2. ՀՀ կառավարության 14.07.2016թ թիվ 737-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արմավիրի մարզի թվով 12 համայնքների համար 22 հակակարկտային կայաններ ձեռք բերելու համար հատկացվել է 61600000(վաթսունմեկ միլիոն վեց հարյուր հազար)ՀՀ դրամ գումար:Մրցույթում հաղթող ճանաչված <<Բարվա>>ՍՊԸ-ն իրականացրել է հակակարկտային կայանների մատակարարումը:

3. ՀՀ կառավարության 25.10.2016թ թիվ 906-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից

ա) Վաղարշապատ քաղաքի թիվ 7հիմն. դպրոցի մարզադահլիճի վերանորոգման նպատակով հատկացվել է 15000000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ գումար, որից նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար 525000(հինգ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ գումար,որից մրցույթի արդյունքում Ա/Ձ Մկրտչյան Սերյոժայի հետ կնքվել է 495000(չորս հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի պայմանագիր, իսկ վերանորոգման աշխատանքների համար 14475000(տասնչորս միլիոն

չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումար, որից մրցույթի արդյունքում <<Իմպերիալ-Տուր>> ՍՊԸ-ի հետ կնքվել է 12798000(տասներկու միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար ) ՀՀ դրամ գումարի վերանորոգման աշխատանքների կատարման պայմանագիր, Ա/Ձ Ղուկաս Սարգսյանի հետ կնքվել է 250000(երկու հարյուր հիսուն հազար)ՀՀ դրամ գումարի տեխնիկական հսկողության պայմանագիր, Ա/Ձ Մկրտչյան Սերյոժայի հետ կնքվել է 86000(ութսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի հեղինակային հսկողության պայմանագիր: բ) Վաղարշապատի մարզադպրոցի ֆուտբոլի և վազքուղու կառուցման աշխատանքների համար տրամադրվել է 20000000 (քսան միլիոն) ՀՀ դրամ գումար, որից նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար 700000(յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, որից մրցույթի արդյունքում <<Էյ Վի ԷՆ Գրուպ>> ՍՊԸ-ի հետ կնքվել է 350000(երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի պայմանագիր իսկ վերանորոգման աշխատանքների համար 19300000(տասնինը միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:Մրցույթը չի կայացել:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Կատ՝. Կ.Դանիելյան
Վ. Մկրտչյան